ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ № ԲԸԱՀԾՁԲ-1-10

ք. Երևան 20 .12. 2016թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ Կ. Կարապետյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև՝ Պատվիրատու, մի կողմից «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ-ն՝ ի դեմս ընկերության տնօրեն Հ. Ֆարամազյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Կատարող, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող № 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է սույն պայմանագրի № 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

1.3 Սույն Համաձայնագրի գործողությունը տարածվում է 2016թ. հունվարի 1-ից հետո կողմերի միջև ծագած հարաբերությունների վրա:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի № 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի № 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագրին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի № 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը: Մինչև սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ավարտի օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 3 օրինակ (Հավելված № 3) և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված № 3.1):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից (5) ինգօրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր գինը կազմում է 1 083 250 /մեկ միլիոն ութսուներեք հազար երկու հարյուր հիսուն/ ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ծառայության դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 25.12.2016թ.:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի № 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը: Սույն Համաձայնագրի գործողությունը տարածվում է 2016թ. հունվարի 1-ից հետո կողմերի միջև ծագած հարաբերությունների վրա:

7.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով

Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

Արգելվում է սույն պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող Ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.4 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև սույն պայմանագրով այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

7.5 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.6 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.7 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Կատարողի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.8 Սույն պայմանագիրը կազմված է՝ 10 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ: Սույն պայմանագրի № 1, 2, 3 և 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը:

7.9 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.10 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.11 Սույն պայմանագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ կապի և ԱԿՀ վարչությունը:

8. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ
ք. Երևան, Բագրևանդի 5	ք. Աբովյան, Խաղաղության փող. 1
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի	«Արդշինբանկ» ՓԲԸ
գործառնական վարչություն	Հ/հ 2471000825740010
Հ/հ 900011144079	ՀՎՀՀ 00096001
ՀՎՀՀ 00867415	Տնօրեն
ՀՀ ՊՆ ՆՏԱ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՊԵՏ	
Վ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ	Հ. ՖԱՐԱՄԱԶՅԱՆ

Ն. Կ. ք. Ղազարյան.

ե/գ 005570585

Հավելված N 1
ԲԸԱՀՇՁԲ-1-10 ծածկագրով գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ ԵՎ ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Համացանցային ծառայությունների (isp) (ինտերնետ ծառայության մատուցում))

Հ/հ	Ստորաբաժանում		Տեղակայում	Հասցե	ԻՆՏԵՐՆԵՏ Արագություն, Մբ/վ	Գնման ժամանակացույց՝ ըստ ամիսների 2016թ. հունվար-փետրվար
1	10037	ՊՆ կենտրոնական համալիր	ք. Երևան	Բագրևանդի 5	62	1083250 ՀՀ դրամ
2	19450	ՊՆ ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտ	ք. Երևան	Երզնկյան 75	10	
3	ՏՋԿ	Հանրապետական	ք. Երևան	Բաբայան 5	10	
4	59559	ՊՆ ռազմական ավիացիոն ինստիտուտ	ք. Երևան	Արշակունյաց 87 ա	10	
5	24236	ՊՆ Ռազմական ինստիտուտ	ք. Երևան	Շոպրոնի 77	10	
6	10724	ՊՆ ռազմական ոստիկանություն	ք. Երևան	Ծ.Իսակովի 18/10	5	
7	14172	ՊՆ ռազմամարզական վարժարան Մ.Մելքոնյանի անվան	ք. Երևան	Հալաբյան 44	10	
8	73067	ՊՆ կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողով	ք. Երևան	Մուրացան 115	5	
9	14203	ՊՆ Կենտրոնական կլինիկական զին. հոսպիտալ	ք. Երևան	Մուրացան 115	5	
10	95532	Խաղաղապահ ուժերի բրիգադա	ք. Երևան	Արշակունյաց 2	5	
11	31549	Կապի առանձին գունդ	ք. Երևան	Ծարավ Աղբյուրի 54	5	
12	42285	Ենթասպաների դպրոց	ք. Երևան	Թևոսյան 14	2	
13	90999	ՀՈՒ ԳՇ ստանդարտացման և չափաբանության բաժին	ք. Երևան	Ծ.Իսակովի 22	5	
14	22059	ՀՈՒ ԳՇ ռազմական հաղորդակցությունների բաժին	ք. Երևան	Տիգրան Մեծի 58	2	
15	32822	Ավիացիոն բազա	ք. Երևան	Էրեբունի օդանավակայան	2	
16	90453	Ավտոմոբիլային տեխնիկայի նորոգման առանձին գումարտակ	ք. Երևան		2	
17	80088	ՌԷՊ առանձին գունդ	ք. Աշտարակ		2	
18	24923	Հատուկ նշանակության առանձին բրիգադ	ք. Երևան		2	
19	14746	Պահպանության և սպասարկման առանձին գունդ	ք. Երևան		2	
20	25149	Հատուկ նշանակության առանձին ռադիոտեխնիկական գունդ	ք. Երևան	Ք.Երևան, Աջափնյակ համայնքի Լենինականի փ.	2	
21	88865	Կայազորային հոսպիտալ	ք. Երևան	Ք.Երևան, Աղոնցի փողոցի հ.13/21 հասցեում գտնվող Երևան 75 հոսպիտ	2	
22	98360	Իրային կենտրոնական բազա	ք. Երևան	Արցախի 61	2	
23	57454	Պարենի և տեխնիկական միջոցների պահպանման բազա	ք. Երևան	Սարմի 103	2	

24	74352	Սանիտարական հակահամաճարակային ծառայություն	ք. Երևան	Արշակունյաց 73Ա	2
25	28920	5-րդ ԲԿ	ք. Երևան		10
26	54574	Առանձին մոտոհրաձգային գունդ	ք. Երևան		2
27	68617	Հատուկ հրաձգային գունդ	ք. Երևան		2
28	55565	Առանձին հրթիռային բրիգադ	Նուբարաշեն		2
29	15166	Տարհանման և փոխադրումների առանձին բազա	Մերձավան		2
30	83580	Կապի տեխնիկայի պահպանման ու նորոգման բազա	ավ.Բալահովիտ		5
31	55076	Առանձին հրետանային բրիգադ	ավ.Բալահովիտ		2
32	93353	Նյութական ապահովման առանձին գունդ	Քասախ	"89"	2
33	40359	Առանձին ռադիոտեխնիկական գունդ	Չոբանքարա		2
34	79512	Հրթիռահրետանային սպառազինության պահպանման և նորոգման բազա	Պռոշյան		2
35	55261	Առանձին ուսումնական հրետանային գունդ	Լուսակերտ	Կոտայքի մարզ, Նոր-Գեղ համայնքի Երևանյան փ. N 150 և N 154	2
36	95414	Վառելիքի կենտրոնական բազա	ք. Աբովյան		2
37	52265	Առանձին խաղաղապահ ինժեներասակրավորային գումարտակ	Ք. Էջմիածին		2
38	43755	Զենիթային հրթիռային բրիգադ	Չոբանքարա	"35"	2
39	73014	Բուժտեխնիկայի և դեղորայքի կենտրոնական բազա	ք. Աբովյան		2
40	16396	1-ին ԲԿ	ք. Գորիս	Անկախության փ. 60	10
41	37082	3-րդ ԲԿ	ք. Վանաձոր		10
42	27527	4-րդ ԲԿ	Ք. Եղեգնաձոր	ՀՀ Վայոց Ձորի մարզ, Եղեգնաձոր-1	10
43	14705	Ռազմաքարտեզագրական կենտրոն	ք. Երևան		10
44	21833	Նյութատեխնիկական միջոցների առբերման առանձին գունդ	ք. Վանաձոր		2
45	55537	Բանակի կենտրոնական մարզային ակումբ	ք. Երևան	Շիրակի 39ա	2
46	45077	Զրահատեխնիկայի նորոգման բազա	Եղվարդ	Կոտայքի մարզ, 'Եղվարդ-1' զինական	2
47	94492	Հրթիռային վառելանյութի և վառելիքի բազա	Ղալթախչի / Լուսաղբյուր	"90"	2

48	53620	"Փամբակ" ուսումնական կենտրոն	Փամբակ	Փամբակ և Քարաշամբ համայնքների վարչական տարածք	2
49	20666	Առանձին տանկային գումարտակ	ք. Կապան		2
50	32236	Զենիթային հրթիռային գունդ	ք. Մարտունի		2
51	79209	Հրթիռահրետանային սպառազինության պահպանման բազա	ք. Գորիս	BRIDGE	2
52	72207	Հրթիռահրետանային սպառազինության պահպանման և նորոգման բազա	Վանաձոր Թեժ Լեռ		2
53		"Սանատորի"	ք. Աշտարակ	"154"	20
54	51191	Առանձին մոտոհրաձգային գունդ	ք. Իջևան	Գետահովիտ համայնք	2
55	26040	ՀՕՊ և ավիացիայի միավորված հրամանատարական կետ	Զոբանքարա		2
56	60369	Առանձին մոտոհրաձգային գունդ	ք. Գորիս	Սյունիքի փ.	2
57	54122	Առանձին մոտոհրաձգային գունդ	ք. Կապան	Գր.Արզումանյան 1	2
58	40861	ԶՏ և ԱՏ նորոգման վերականգնման առանձին գումարտակ	ք. Կապան	Գործարանային փ.	2
59	60913	Առանձին մոտոհրաձգային գունդ	ք. Սիսիան	Շիրակի փող. N 3	2
60	32277	Կապի ուսումնական գումարտակ	ք. Արտաշատ		2
61	83510	Կապի առանձին գումարտակ	ք. Եղեգնաձոր		2
62	70839	Առանձին զենիթային տեխնիկական հրթիռային բազա	ք. Արթիկ		2
63	72035	Կայազորային հոսպիտալ	ք. Վանաձոր	Մոսկովյան փ.	2
64	31047	Կապի առանձին գումարտակ	ք. Վանաձոր	Վանաձոր-36	2
65	13516	Առանձին ինժեներատակրավորային գունդ	ք. Էջմիածին		2
66	41096	ՌՔԿՊ առանձին գումարտակ	ք. Էջմիածին		2
67	54850	ՀՕՊ մասնագետների պատրաստման ուսումնական կենտրոն	Մուղնի		2
68	50035	Հակատանկային հրետանային գունդ	ք. Գյումրի		2
69	53344	"Հայ Զինվոր" թերթի խմբագրություն	ք. Երևան		5
70	26338	Մշակութալուսավորչական միջոցների նորոգման և սպասարկման բազա	ք. Երևան		2
71	18120	ՊՆ "Լեռնային Հայաստան" տուն առողջարան	ք. Դիլիջան		5
72	83117	Զենիթային հրթիռային գունդ	ք. Գորիս		2
73	53661	Ավիացիոն բազա	ք. Գյումրի		2
74	23935	Կայազորային սպայի տուն	ք. Երևան	ՄՀՀ	2

75	51556	ՌՏՊԲ	ք. Ստեփանավան		2
76	62426	Կայազորային հոսպիտալ	ք. Վարդենիս		2
77	60925	Ուսումնական կենտրոն	ք. Արմավիր		2
78	70011	Կայազորային հոսպիտալ	ք. Սիսիան		2
79	45529		ք. Արմավիր		2
80	51036		ք. Բերդ		2
81	59016		ք. Վարդենիս		2
82	61091		ք. Վարդենիս		2
83	41507		ք. Դիլիջան		2
84	81151		ք. Դիլիջան		2
85	37564		ք. Սիսիան	գ. Նորավան	2
86	50869		ք. Մեղրի	գ. Ագարակ	2
87	70179		ք. Վայք		2
88	ուս. կենտրոն		Կոտայքի մարզ	գ. Ձառ	2
89	58831		ք. Արարատ		2
90	76852		ք. Վեդի		2
91	17193		ք. Բերդ		2

Համացանցը տրամադրել անխափան, 24 ժամյա, 367 Մբիտ/վրկ սինխրոն (367 Մբիտ/վրկ ելքային և 367 Մբիտ/վրկ մուտքային), երաշխավորված, օպտիկամանրաթելային կապուղով միացված, 64 ռեալ IP:
Կազմակերպել 367 Մբիտ/վրկ արագությամբ համացանց Բագրևանդ 5 հասցեում, իսկ մնացած կետերը մեկ ընդհանուր WLAN-ով սահմանված արագություններով Data

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարություն

ՀՀ ՊՆ ՆՏԾ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՕՐԵՆՍՏԻ ՊԵՏԻ ՊԺԿ

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ

«ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ

Տնօրեն

Հ. ՖԱՐԱՄԱԶՅԱՆ

005570585

Հավելված N 2
ԲԸԱՀՇՁԲ-1-10 ծածկագրով գնման պայմանագրի

Վճարման ժամանակացույց

ՀՀ դրամ

Հ/հ	Ծառայության անվանում	CPV կոդը՝	*Նախատեսվում է ֆինանսավորել 2016թ. ըստ ամիսների, բայց ոչ ուշ քան 25.12.2016թ
			դեկտեմբեր
1	Համացանցային ծառայությունների (isp) (ինտերնետ ծառայության մատուցում))	72411100/3	1 083 250

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարություն

ՀՀ ՊՆ ՆՏԱ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՊԵՏԻ ՊԺԿ

/ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ

«ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ

/ Տնօրեն

Հ. ՖԱՐԱՄԱԶՅԱՆ

Հ/Հ. 00557058 5

Հավելված N 3
ԲԸԱՀՇՁԲ-1-10 ծածկագրով գնման պայմանագրի

Պայմանագրի կողմ

_____

_____

գտնվելու վայրը _____
հհ _____

_____

հվհհ _____

Պատվիրատու

_____

_____

գտնվելու վայրը _____
հհ_____

_____

հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆԱՄԱՆ-ԸՆԴՈՒՆԱՄԱՆ

<< >> << >> 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____
*Պայմանագրի կողմը՝ ի դեմս*_____ *և*
Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն
Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն
Կ.Տ.

Հավելված N 3.1
ԲԸԱՀԾՁԲ-1-10 ծածկագրով գնման պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ----------ի (այսուհետ՝ Պատվիրատու) և
(Պատվիրատուի անունը)
----------ի (այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. ------ -ին կնքված N ----------
(Կատարողի անունը)
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. ---------- -ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
Անվանումը	**Քանակական ցուցանիշը (փաստացի)**	**Չափի միավորը**

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

ազգանուն, անուն

ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

ազգանուն, անուն

ստորագրություն